


Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիւնիկ» Գ
Աղեֆսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Չր. 25
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑՍՄՍԵԱՅ 25

Ֆր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑՍՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵ ԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏՅՐԵԿԱՆ ԲՈՂ. 6

ՓԻԻՆԻԿ



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 8 ՓԵՏՐՈՒԱՐ 1902

ԹԻԻ 38

ՏԱՐԵԿԱՐՁՄԸ

Ամսոյս 4ին երեքաբքի օրը սարեդարան էր ծննդեան Տիգրան Երկաթին, որուն կեանքը կը գրեմք քանի մամիւնեք է ի վեր: Այս սարեդարան պէտք է նկատուի մեր ապրող երեսասարդութեան համար նուիրական ու յաւէտ սրգաւոր սարեդարան մը: Ժամանակն է ալ լրջօրէն զբաղելու այս վաղամեռիկ հայրենասէր բանաստեղծով, որուն, դժբաղդաբար մեզի համար, սաղանդին բոլոր արտադրութիւնները Ֆրանսերէն ըլլալով անմասշեղի պիտի ըլլային Հայերու, եւ որ եթէ հայերէն գրած ըլլար պիտի այսօր դարձած ըլլար ժողովրդական անուն մը:

Պիտի գայ սակայն ասեմը, ու Երկաթին հեղինակութիւնները պիտի բարգմանուին հայերէնի. այն ասեմ, Հայութիւնը պիտի զգայ արժէքը կորստին ու պիտի թերեւս բիւրապակէ իր խանդավառ ցոյցերը հանդէպ յիշատակին

իր զաւակներէն գեղեցկագունին ու վեհագունին:

Փիւնիկը, միշտ յարգող ու հիացող Տիգրան Երկաթի հանճարին, կը փութայ այս անգամ, օգտուելով անոր ծննդեան սարեդարան առիթէն, ընծայել իր ընթերցողներուն *Մահաւերժ ֆերթոյ* ֆերթուածին բարգմանութիւնը, մին անգամ ցանցնած քանի մը քանակ գահարներէն: Թարգմանութեան հետ կը հրատարակենք եւ բնագիրը, Ֆրանսերէնի հմուտ մեր գրասէր ընթերցողներուն առթելու համար հանոյք մը, միեւնոյն ասեմ հաստատելու համար թէ բնագիրը միշտ բան մը կը կորսնցընէ բարգմանութեան մէջ: Այս ֆերթուածը յայտնութիւն մը պիտի ըլլայ բանաստեղծական աշխարհին մէջ. այն աշխարհին, ուր վարժուած են իսկ մը սովորական կարգի գրիչներու սափակ ու անկրակ ռսանաւորները մտիկ ընելու:

Փառաբանելի է որ Կովկասի ու Արտասահմանի մամուլը դարձնող մեր բա-

յատէր եղբայրակիցները հանին իրենց անձնական կարծիքները հրատարակել « Մահաւերժ Բերթոլդ »-ին վրայ որ նմայե մ'է քնարական փերթուածներէն Անոր, որուն անմահութիւնը դարձեալ պիտի երաւխաւորուած ըլլար ապահովապէս, եթէ զանի նկատէին նոյնիսկ լոկ բանաստեղծ մը, առանց հաշուելու գերազանցորէն սգակար դերերը, զոր կատարեց Երոպական մամուլին մէջ իբր *ֆադաֆական մարդ* ու *հայրենիքի մարդ*:

Վերապահելով մեր գնահատումները Տիգրան Երկաթի կենսագրութեան այն կարեւոր Գլխուն, ուր պիտի վերլուծենք անոր գրական գործերը, կը յայտնենք հրապարակաւ, մեր արագին վճակցութիւնները Տիգրանի Տան ու կը մաղթենք որ հայ ազգին եղջանիկ առիթը ներկայանայ soնելու անոր մեծ սարեղարձը, անկախ ու ազատագրուած հայրենիքին մէջ, ինչոր եղած էար դէն Երկաթին Մեծ Երազը: -

ՄԱՀԱՄԵՐՉ ՔԵՐԹՈՂ. (1)

Ինչո՞ւ գլխիս վրայ երբեք չունենայի Մեծ բանաստեղծին պսակը դափնի. Ինչո՞ւ արհիս չըրային շուրջը բնախն Դաշնակաւոր այն երգերը *սառապակի*, որ խուսելով արեւն ինչպէս սի մուր ոգի Տրտունջը կ'ընեն հաւասար ցաւին:

Ինչո՞ւ, երբ բաղդն իս կը սանջի հաշածական Թաղուիւն անձնասուր գիրկը *սրտնաքեան*, Ու չը ճակիս թաղդին դեմ ու չանիծե՛մ զայն: Ցաւը գիտե՞ գիտիս պէս արեւն ել, Ցաւը գիտե՞ արբուն հասակդ ու փառքդ երգել, Յետո՞յ, պսակեցնել քեզ ծոցը մահուն:

Ի՞նչ փոյթ եթէ մեռնիս քան սարեկան դուն, Հերիք է որ անմահ պակե՞ քեզ ապառնին. Ու դագաղիդ վրայ հրեշտակը համբաւին՝ Միևջեւ երկինքը հսկե՞ քու անուն:

Կուզե՞ս խեղճուն ծեր. քաղք բերել զքեզ իմար, Մարդերուն մեջը հասակե՞ հասակ. Առակ ընել ճամբորդութիւնդ անոնց դժուար, Տեղեւաններուն ա՛յ ինչքո՞նք նպասակ.

Ա՛յ՛ չերագես, դե՛հ, ա՛ն սաւիղդ ու երգե՞ մեզ, - Մեր շիճերուն վրայ երբ իյնայ հաւն հոգեվար Կրկնյե՞ ճայնն հեռուն, խազն ե՛ւս է արակեզ - Եղեզնէ՛րը շունին քախծոս ու սարսուհար - Ու հուսկ թոյլցնով մ'ընդբանայով քեզք կրկին Անմահ սարերը կը դիտե՞ արսառուազին, Ու իր ժայռին ոտքը կիյնայ պատառպատառ. Ոչ ինչ կեանքն անդին սարաւ իր հետն անի, Բայց ծովափը, ծուրեռուն վրայ պիտի երկա՛յն, Մնայ սարսաւ յիշատակ մը անհուն ցաւի Ինչպէս դիւրոյ դաշնակութիւն քեկքնէլ վիճի, Ինչպէս շիրմաց վրայ թափուած արցունքի ճայն

Երգե՛ դու, երգե՛, հուսկ ե՛րգը մահուն, Փառքը ճիգիդ ժպտելով մը կը նայի, Քերթո՛ղ, յիշե՛ որ կը խօսիս աշխարհի, Պիտի մահուն անջ վերկենցաղիս • դուն:


ՏԻԿՐԱՆ ԵՐԿԱԹ

Փարզմ . Ս. Բ.

(1) ՅԵՏ ՄԱՀՈՒ ԵՐԿ Տիգրան Երկաթի (Կարապետ Պիշգիկնի). իր հաւաքածոյէն « Բանի մը ժամեր - Տարբ 1888 »

ՓԻԻՆԻԿԸ կուսայ այս հրաշագեղ ու յուզիչ փերթուածը որ 'Կ'երգե՞ հեղինակին իսկ կեանքն ու մահը, առիթովը ծննդեան սարեղարձին (4 փետրուար 1870) մեր արդի ազգային -անվիճելիորեն- մեծագոյն հանձարին, ինչպէս որ արդեն հոջակած էր սեզմե՞ շատ առաջ « Հանդես Հանդիսից » ի համակրելի սեօրեղը, Տ. Ժան Ֆիւս, մեծանուն հայսուերը:

Ս. Բ.



POÈTE MOURANT. (1)

*Pourquoi n'aurais-je point comme le grand poète
 Le laurier sur ma tête-*
*Pourquoi n'aurais-je point tout autour de mon cœur
 Ces chants harmonieux que chante la souffrance
 Et qui fuyant du cœur comme une sombre essence
 Ont égalé la plainte à la douleur !*
*Pourquoi quand le destin me tourmente et m'opprime,
 M'abandonner à la tristesse-*
*Sans relever le front et maudire le sort ?
 La douleur comme un vin peut conduire à l'ivresse,
 La douleur peut chanter ta gloire et ta jeunesse
 Et puis te coucher dans la mort -*
*Qu'importe si tu meurs en ta vingtième année
 Pourvu que l'avenir te conserve immortel
 Et que sur ton cercueil l'ange de renommée
 Elève ton nom jusqu'au ciel !*
*Veux-tu, vieillard chétif te traîner d'âge en âge
 Au milieu des sots humains -
 Exposer à leurs ris ton pénible voyage,
 A leurs convoitises - les biens ?*
*Allons! ne rêve plus - prends ta harpe et nous chante -
 Quand l'oiseau sur nos lacs tombe près d'expirer,
 Sa voix résonne au loin, sa note est plus touchante
 - On entend les roseaux tristement frissonner -
 Et dans un vol suprême entrouvrant les deux ailes
 Il regarde en pleurant les hauteurs éternelles
 Et retombe en lambeaux au pied de son rocher -
 Il n'a rien emporté par delà de la vie
 Mais longtemps restera sur la rive et les flots
 Un vague souvenir de douleur infinie
 Comme d'un luth brisé la magique harmonie
 Comme le son des pleurs versés sur les tombeaux -*
*Chante, chante l'hymne dernière!
 La gloire en souriant regarde ton effort
 Poète, souviens - toi que tu parle à la terre-
 Tu vas renaître dans la mort.*

TIGRANE YERGATIE

(1) Oeuvre posthume de Tigrane Yergate (Garabed Bilézikdji) Extrait de son recueil
 « QUELQUES HEURES - Année 1888 ».

Le PUNIG donne cette splendide et émouvante poésie qui chante la vie et la mort

ՔՐՈՆԻԿ



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԱՆԱՅ ՇՐՋԱԿԱՅՔԸ վերջերս սու-
կալի ոնիրներ գործուեցան:

Քուրսերը նորէն սկսան իրենց հը-
րոսակութիւնները. շատ մը Հայեր ըս-
պաննեցին ու քանի՛ քանի գիտէր քա-
լեցին: Ինչպէս որ սովոր են, թուրք իւ-
խանութիւնները կը յայտարարեն թէ՛
իրենք չեն կրցեր արգիլել Քուրսերուն
ասպասակութիւնները: Իսկ Օսմ. գոր-
փերը հրոսակները մեկնելէն յետոյ միայն
գացած են ոնիրներուն վայրը:

Ո՛չ մի սէրութիւն բողոքեց. Բ. Դու-
որ բողոք է Հայերն իրենց սեւ բաղ-
դին:

Տէրութեւնները բոլորն ալ զբա-
ղումներ ունին, որոնք շատ աւելի ստի-
պողական են քան թէ Քուրսերուն մաս-
նուած ազգի մը պատկանութիւնը:

Ա՛յ երուպա չքկայ բարոյականի,
մարդասիրութեան ու քաղաքակրթու-
թեան իմաստովը. անի այդ գեղեցիկ
անունն ունէր հին ասերը:

ՖՐԱՆՍ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՁ

ՀԱՅԿԱԿԱՆ ՋՍՐԴԵՐԸ

20 Յունվարի նիսք

Արտաքին գործերուն պիտեմէն վի-
նաբանութեան մէջ, շատ մը հարցա-
պնդումներ եղան, որոցմէ կ'առնենք
մենք Տ. Կիւսքա Ռուանէինը, միջոցնե-
րուն վրայ գործ Երանսական կառա-

*de l'auteur même, à l'occasion de l'anniver-
saire de la naissance (4 Février 1870)
de notre génie moderne - incontestable-
ment le plus grand - comme l'avait proclamé,
d'ailleurs. bien avant nous, un éminent phi-
larmène, le sympathique directeur de la « Re-
vue des Revues », M. JEAN FINOT.*

N. D. L. R.

վարութիւնը ձեռք առած է կամ առ-
նելու միտք ունի արգիլելու համար
հայկական ջարդերու վերադարձն եւ
յարգել զայն Պերլինի դաւանագրին
պայմանները:

Տեղանեջ կը նախագահէ. խօսքը
Տ. Ռուանէին է:

Համառոտ մը կը յիշէ դէպքերը,
որոնց հետեւանով Երանսական նա-
ւաստմիտ մը դրկուեցաւ Մեսիլէն, ու
Տ. Տէլգաւէի յայտարարութիւնները գոր-
բեմէն ըրաւ նոյ. 4ի նիսքին մէջ:

Այս յայտարարութիւններէն իվեր,
կը շարունակէ, որոնց մէջ ընդունա-
րել կը կարծէր խոստում մը, մեր նա-
խախտմբը կանչուեցաւ եւ: Անպատեհ
գեղոյցներ, այս տեսակ պատեհական
գեղոյցումներու սովորական ոնովը
խմբագրուած, իմացուցին մեզի թէ
Երանսան Սուլթանէն սացած էր բոլոր
ուզում գոհացումները: Տեղ մը չը տե-
սայ թէ՛ Տ. Տէլգաւէ ո եւ է բան մը
պայմանագրած ըլլայ ի նպատակ Հայոց-
թէ՛ ո եւ է միջոց մը փորձուած ըլլայ
Կ. Պոլսոյ մեր ներկայացուցիչէն՝ ար-
գիլելու համար սպաննութիւններն ու
ծրագրուած ատարակութիւնները:

Ծանուցուած էր Դեղին տեսակի մը
հրատարակութիւնը, գոր կ'սպասէինք
ստոյգ անհամբերութեամբ մը. այդ հրա-
տարակութիւնը չ'եղաւ:

Հարցընել կուգամ Արտաքին գոր-
ծերու Տ. նախարարին թէ՛ ինչո՞ւ է այս
լուրսիւնը կամ մոռացումը: Ասկից
գաս, կը խնդրեմ իրմէ որ բարեհաճի
մեկին, ամենուն ալ հասկնալի լեզուով
մ'ամբողջացնելու նոյ. 4ի իր յայտա-
րարութիւնները: Թող ըսէ մեզի թէ այ՛ն
կամ ո՛չ, բողոք որ Հայերուն բնաջըն-
ջումը շարունակուի Ապս-Իլ-Համիթի
ձեռնով, ու անպատեհ բողոքի քաղա-
քակրթութեան ու մարդկութեան դէմ
այսօրն ոնիրներու արիւնք գործա-
դիրը, չե՞ն նշանակել լիւմը հայրենի
հողին, բարոյական ասերուն, գործ Տ.

նախարարապետը կը հաստատէր թէ չէր ուզեր պակսեցնել: (*Ճարհահարուստի մասին*)

Արդարեւ, հակառակ Տ. Տէլգաւտի կողմէն բերուած լուստեստեղծութեանց, ժրանսա հասած վիշտի անբողոքութիւնը ցոյց կուտայ թէ 1900 ու 1901 տարիներուն ընթացքին, Հայաստանին բոլոր կէտերուն վրայ, դժբաղդներ ինկած են հարուածներուն տակը, մերթ Թուրքերուն, մերթ Քուրտերուն, որոնք կը թալլեն իշխանութեանց համաձայնութեամբ: Երբ Թուրքերուն կրօնային եռանդը կամ Քուրտերուն անյազոյթութիւնը տեղի տայ, իշխանութիւնները կ'առնեն Հայերու որսին նախաձեռնութիւնը:

Արտաքին գործերուն Տ. նախարար մեզի ըսաւ թէ՛ Հայերը ենթարկուած էին կանոններու, որոնք զանոնք կարգիլէին եթէ ո՛չ ապրելէ, գէթ բարգաւանելէ, ու կ'աւելցնէր.

«Աւելի մասնաւորապէս կը տառապին ընդհանուր անապահովութեան երեսէն. ու խիստ յաճախ անպատիժ բողոքիլը ոնիրներուն, որոնց զոհերն են իրենք, ենթադրել կուտայ թէ առանց նողկանքի կը նայուի անոնց.»

Հիմայ պիտի ցուցնեմ՝ մեզի, տարր, թէ Արտաքին Գործ. Տ. նախարարին տուած տեղեկութիւններն անկասար են:

Իրօք, մասնակի ոնիրներ չեն Հայերուն կրածները: Անոնք, 1900ին ու 1901 ին ունեցան այն կացութիւնը, որ գտնուեցան 1892-1893 ին. յաջորդող մեծ շարժերուն նախընթացք: Ու ամենը կը թուի կարծել տալ թէ՛ Սուլթանը, հակառակաբարձական այս ոնիրներուն ուղիղ ու պատասխանատու հեղինակը, չէ՛ ձեռքէ ձգած շարունակութիւնը բնաշնչամի իր խորհուրդներուն:

Ու՛ր կը վերջանայ անհասական մարդասպանութիւնն եւ ու՛ր կ'սկսի շարժը:

Մեզի դաւանքն մէջ, մեզի կ'ըսէր Տ. Տէլգաւտ, վախճուած շարժերը տեղի չունեցան: Շատ ատեն ցաւելու քանի մը անհասական սպաննութիւններ տեղի ունեցած են:

Արդ, անհա ինչ որ կը կարգամ Մեզի դաւանք գեղերուն մէկէն հասած նամակի մը մէջ, ուղղուած իմ մեծաւուն ընկերակցիս Տ. Բիւրքի Քիւրթի որ Թուրքիոյ բաներուն վրայ իր փորձառութիւնը կը նուիրէ Հայերուն պատկանութեանը: «*Pro Armeniam*: 14 Սեպտեմբեր. - « Սիրեցեալ տղաս, կը գրես ինձի թէ նամակներս յուզիչ են ու քեզ խիստ կը տխրեցնեն: Բայց, իմ ամենասիրեցեալ, ի՞նչ ընենք, որուն հետ լանք մեր երկրին տառապանքները: Մի թէ կրնամ լռել ու վիշտեստ բնաւ չը բաժնել իմ զակիսս հետք. քեզի ամեն բան կը պատմեմ, օրը օրին, որպէսզի սիրես զովանայ:

Դեռ հազիւ ամիս մը կայ որ Մուսարիմի մէջ լողաց: Հայ գեղերը կոստուեցան: Քեզի չեմ կրնար պատմել «*սեր զարունը*» որ կ'սպասէր կոյսերուն ու կիներուն. գալով զոհերուն, անհա.

Արալ, 10	հոգի
Հասարակ, 4	»
Կարներ, 7	»
Բիւրքի, 10	»
Հունեա, 17	»
Բերդալ, 2	»
Այուսիս, 6	»
Ալիջո, 4	»
Յոլիս, 2	»
Կոնստ, 30	»
Մոկուս, 20	»

Ամենը 106 հոգի:

Վերեւ յիշուած գեղերը քանդուեցան, ողջ մնացողները չունին ոչ հաց ոչ հագուստ:

Քուրտերը տարան ամենը: . . . :

Ականատես վկան այս սպաննութիւնուն, զոր արտաքին գործերու Տ. նախարարը չը կրնար իր անուանել

մասնակի ոճիքներ, անհասական մար-
դասպանութիւններ. կ'աւելցնէր.

« Հիւսայ կ'իւնանամ թե՛ քննիչ յանձ-
նախումբ մը մեկնած է Մուշ, արդար-
ութիւնն երեւան հանելու նպատակով:
Հը՛, արդարութիւնը: Ի՞նչ կայ անկէ
աւելի աժան: Ո՛վ կրնայ անգիտանալ
թէ յանձնախումբը տեղեկագիր մը շի-
նե, որուն համեմատ Հայե՛րը պիտի
ֆանդած ըլլան իրենց տունէ՛րը:

(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Ը Ն Տ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը .

Տեղիս Թաղ՝ Խորհուրդին ընտու-
քիւնները պիտի սկսին մօտեւ: Առ այ-
ժըմ ոչ ինչ ունինք աչեւրնուս առջեւ
հասարակութիւնը լուսաւորող, եթէ ո՛չ
ընտելիներու եռապատիկ ցանկ մը,
գոր usուել կը հրատարակենք, բնակա-
նաբար ո՛չ այն կարգով, որով հրատա-
րակուած էր վարձուած պատճառա-
բերքին մէջ, չենք գիտեր ո՛ր ֆաշաֆա-
վար քղապետին կամ գրագրին աննա-
րակութեամբը:

Այսպիսի պարագաներու մէջ լա-
ւագոյն է ընտել այբուբենական կար-
գը, չը գրգռելու համար դիւրագա-
ծութիւններ, որոնք, դժբաղդաբար, մեր
բարեբեւեմ են:

Ը Ն Տ Ր Ե Լ Ի Տ Ե Ղ Բ

- 1 ՎՍԵՄ. ՊՕԳՈՍ ԲՍՇԱ. ՆՈՒՊԱՐ
- 2 » Աբրահամ պէյ Բարթոյ
- 3 Ազն. Աժսէրեան Լեւոն
- 4 » Արքիեօ Անսօն
- 5 » Գալճեան Միհրան
- 6 » Էփրզլէր Հայկ
- 7 » Իփէեան Գէորգ
- 8 » Կամարական Արմենակ
- 9 » » Տիգրան

- 10 » ձէվահիրեան Ալեքսան
- 11 » Մելեքեան Գրիգոր
- 12 » Մուրաճեանց Յովհաննէս
- 13 » Շէրիսնե ան Ասուր
- 14 » Ուղուրեան Յակոբ
- 15 » Չպուգեան Գառնիկ
- 16 » Սարգիսեան Գէորգ
- 17 » Սվազլը Չարեհ
- 18 Վսեմ. Րէյիգեան Կարապետ Պէյ
- 19 » Արքիե »
- 20 » Միքայէլ »
- 21 Ազն. Օհանեան Պերն

Յանկին ըսելիք չկայ. մէջը կը
զսնուին անուրես անձեր, որոնք դեռ
կը վայելեն հասարակութեան համակ-
րանքն ու համարումը, եւ որոնք բարե-
բախտաբար կրնան ամբողջացնել Թաղ-
Խորհրդին անդամոց օրինական թիւը.
Վիայն սա կէտը կը մնայ մութ ու ան-
հասկնալի թէ՛ ինչո՛ւ ցանկին մէջ չեն
առնուած բժիշկներ, ուսուցիչներ ու
մեր ազգային փառքը կազմող ուրիշ
մեակներ, մինչդեռ թեթեօրէ՛ն թէ ան-
խղճմտօրէն սարդեցուցած են հոն անու-
ններ, որոնք մեր Սահմանադրութեան 67
րդ յօդուածով նախատեսուած թերու-
քիւններէն մին ունէին ըստ հաւանակին
ու փափագին Թաղ, Խորհրդին ֆանի
մ'անդամներուն, որոնք պատճառովուս
անցան չանցան, առաջին գործերնին
եղաւ ամբաստանել նախորդները մանա-
ւանդ անոր Ասեմապետը, որ թէ ազգա-
յին եւ թէ օտար շրջանակաց մէջ գրե-
թէ ամենուն ալ ծանօթ է անձնուէր եւ
պարկետ գործունէութեամբը: Այս դիտ-
ողութիւնը կ'ընենք մասնաճիւղ ընելու հա-
մար զարմանալի հակասութիւնն ուր
կիյնայ Առժ. Թաղ. Խորհուրդը (որ
ընտրողական ժողովին մեծամասնու-
թիւնը, կամ, հառուելով բաղադրանքնե-
րուն կրկնորդները, գրեթէ ամբողջու-
թեւնը կը կազմէ) ընտելիներու ցան-
կըն սեցնելու միտումն դէմ
ինքն եղած է դաս բացողը:

Այսպիսի խոռո հակասութեան մը

կոյս, սիշս երախսագիտութեանը կը յիշե ան-
շահախնդիր, գորովայից ու անձնուէր հո-
գածութիւնները իրաւաւր ՄԱՅՐ ԳԱՂԹԱ-
ԿԱՆԱՑ իրող Վսեմափայլ Տիկին
Երանուհի Բարթող Պէշի, որուն եղբայրն էր
հանգուցեալը:

ՓԻՒՆԻԿ եւս ներկայ սգաւիթ վայրկե-
-նին, կը փութայ իր ցաւակցական անկեղծ
զգացումներն արտայայտել, մխիթարութիւն
մաղբերով ողբացեալ հանգուցելոյն բոլոր
պարագայից:

ԵՐԱՆՏԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ ՄԸ

Կուգամ Պաս. Փիւնիկի միջոցա՝
յայտնել իմ շնորհակալիքս Ազն. Տիար
Տօգթ. Մ. Ժամկոչի, որ զիս ազատեց
անխուսափելի մահուանէ, լեարդիս
վրայ կատարելով վիրաբուժական գոր-
ծողութիւն մը, եւ հակառակ շատ մը
օտարազգի բժիշկներու կարծիքին, յա-
ջողութեամբ պսակելով իր անձնուէր
նիզեր: Պէտք է նոս յիշել նաեւ թէ՛
վսանգաւոր հիւանդութիւնը, որմէ կը
ստառապէի տարիներէ ի վեր, բոլորն

վրին անցած է, ու ես այսօր քաջաւոռոջ
ու հանգիստ, նոր յարութիւն առած՝
կը շնչեմ, իմ երախսագիտութեան տուր-
քը վնարելու համար յիշեալ մեծանուն
Հայ բժեկին, որ եղաւ իմ ազատարար:

Աղեփասնդրիս 7 Փետրուար 1902

Մեամ յարգանօք

ՍԱՐԳԻՍ ԳՕՆԴԻԼԵԱՆ ԻԶՄԻՐԵԻ

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻԶԲ

Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսելի հայ տուներուն
ծանօթ յանախօրդ, կը պատրաստեն
զոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարագոյր, եւն:

Յանձնարարութի նք խնամով կը
կատարուին:

Դիմել, Աղդարիւն, Ռիւել-էլ-Չահապի,

Attarine Ruelle-el - Zababy

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի:

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 Ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս
նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆ

Աղեփասնդրիս, պզտիկ Մէնչիե Ապոստոսա փողոց թիւ 10